

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Վ. Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական – 21-րդ դ. 10-ական թթ.)» ատենախոսության

Ատենախոսությունը վկայում է, որ հեղինակը «գեղարվեստական վավերագրություն» կոչվող հետաքրքրական մի ժանրի մանրակրկիտ ուսումնասիրության բնագավառում հսկայական աշխատանք է կատարել, մինչ նրանից առաջ այս կամ այն հեղինակի ուղեգրության, հուշագրության կամ օրագրության մասին հիմնականում առանձին հոդվածներ են եղել (Չ. Բախչինյան, Ս. Գալստյան, Կ. Դանիելյան և այլք):

Ատենախոսի վերլուծությունները և եզրահանգումները համոզիչ ու վստահելի է դարձնում աղբյուրներից քաղված մեջբերումների առատությունը:

Ատենախոսն իրավացիորեն պնդում է, որ այս ժանրը «արևելահայ գեղարվեստական ժառանգության վիթխարի արտահայտություն է»:

Իր նախադիր ծրագիրն իրականացնելու համար Ա. Գալստյանը, կարելի է ասել, բառիս բուն իմաստով քամել է երկու դարի գեղարվեստական գրականությունը: Դրա համար հարկ է եղել կողք կողքի բերել ինչպես գրականագիտական, այնպես էլ լեզվաբանական մտքի «արտադրանքը»: Հեռու չգնանք. վկա է աշխատանքին կցված մատենագիտական 14-էջանոց պատկառելի ցանկը (փակագծերի մեջ՝ մի համեստ դիտողություն. էր երբեմն, համամիութենական ԲՈԿ-ը կարգ էր սահմանել, որ ատենախոսն այս ցանկում պետք է հիշատակի այն աղբյուրները միայն, որոնցից մեջբերումներ է կատարել: Ու եթե այս կարգը դեռ ուժի մեջ է, երանի թե այդպես լինի, ատենախոսության հիշյալ ցանկը, ներառյալ նվաստիս գրչի մի քանի վերնագրեր, կիսով չափ, գուցե ավելիոք կրճատվեր):

1. 1. Հայոց լեզվի գծով գիտաստիճաններ շնորհող ակադեմիական խորհրդի խոնարհ անդամությանս տարիներին առիթներ եմ ունեցել ներկա լինելու հեղինակների լեզվի ու ոճի քննության նվիրված բավական թվով ատենախոսությունների պաշտպանության: Ու թեև դրանց օգտին քվեարկել էլ եմ, մի հանգամանք ինձ միշտ մտահոգել է: Այն, որ դրանք չնայած լեզվաբանության գծով գիտաստիճանի են հավակնել ու արժանացել, գերակշռող մասով գրականագիտական-նճարանական, քան լեզվաոճաբանական քննություններ են եղել: Այլ կերպ ասած՝ այս երկու ճյուղերը քննությամբ չեն սահմանազատվել:

Ինչ խոսք, քանի որ երկուսն էլ՝ լայն առումով գրականությունը և վավերագրությունը, «գեղարվեստական» են կոչվում, դրանց լեզվական ու ոճական քննությունը պետք է շփման եզրեր ունենա: Մականյն դրանցից ամեն մեկում խոսքային, արտահայտչական ու ոճական շրջանակներն ուրույն են: Դրա համար կայսրինը կայսրին, Աստծուն էլ Աստծուն պետք է տալ:

1. 2. Ահա սա է, ինչ նկատի ունեմ «սահմանագատում» ասելով: Ու մեծապես գնահատում եմ, որ Ա. Գալստյանը դա բանիմացությամբ կատարել է, ինչ որ հստակ երևում է քննարկման դրված ատենախոսության 5 գլուխներում: Ու դա արել է ինչպես հայագիտական, այնպես էլ այլալեզու մասնագիտական մի կոկիկ գրադարան ուսումնասիրելու շնորհիվ (ի մասնավորին տե՛ս «Ներածությունը»):

Նա վեր է հանել՝

- = վավերագրողի լեզվի կապը աշխարհաբարի զարգացման հետ,
- = այդ կապը հեղինակի լեզվամտածողության հետ,
- = ժանրի բնութագրական ցուցիչները,
- = վկայագրերում ժողովրդի մտածողության, հոգեբանության, շրջակա բնության, մարդկային հարաբերությունների դրսևորումները,
- = շարադրանքի լեզվական անհատականությունը,
- = ոճական կառույցների բաղադրիչների համակարգը,
- = միջժանրային ուրույն գծերի դրսևորումները,
- = պատումի խոսքի ոճական դրսևորումները,
- = նկարագրական խոսքի ոճական դրսևորումները,
- = փաստագրականի և ստեղծագործականի միաձուլությունը,
- = քնարական խորհրդածությունները,
- = հեղինակ-ընթերցող կապ ստեղծելու ջանքը...

Ապա անցել է՝

- = գեղարվեստական վավերագրության կառուցվածքային բաղադրիչներին՝ ըստ ենթաժանրերի (ուղեգրություն, հուշագրություն, օրագրություն),
- = վավերագրության ձևային-կառուցվածքային բաղադրիչներին,
- = մասնավորապես հուշագրության մեջ բնորոշների բնութագրության, անձնական կյանքին,
- = գնահատող ու դատողական խոսքի ոճական դրսևորումներին... (2-րդ գլուխ),
- = վավերագրության, նրա ենթաժանրերի բառային միավորների քննության՝ ընդհուպ մինչև բառակազմական կաղապարներ (3-րդ գլուխ),
- = վավերագրության ընդհանուր և ենթաժանրերի մասնավոր քերականական (ձևաբանական, շարահյուսական) առանձնահատկություններին (4-րդ գլուխ),
- = պատկերավորման-արտահայտչական համակարգին՝ առանձնահատկությունների ներկայացմամբ,
- = կերպարային-ոճական դրսևորումներին, մինչև ոճական կաղապարներ (5-րդ գլուխ):

2. Այստեղ կարևոր նշանակություն ունի տեսնող-, հիշող-պատմողի, նկարագրողի կամ օրագրողի տողերի արանքում տեսանողի ենթակայա-

կան դիրքը, այն, թե նա իր շարադրանքում ի՛նչ կեցվածքով, ի՛նչ կողմով է ընթերցողին ներկայանում:

Այս տեսակետից հատկանշական են Կապուտիկյանի խոսքն ու ոճը՝ «Քարավանները»-ում թե «Խճանկարում»: Երկուսում էլ դժվար չէ նկատել եսակենտրոն շեշտը, որի գոյությունը հեղինակն ինքն էլ է խոստովանում այսօրվա ատենախոսության մեջ բերված տողերում (էջ 66).

«Թող ների ինձ ընթերցողը, էթե իմ գրքում հաճախ հանդիպի անձնական դերանվան առաջին դեմքի հոլովածներին... Գիտեմ, որ ինչքան էլ ջանամ խուսափել դրանցից ու եղածի աննշան մասը նկարագրեմ, դարձյալ պատմելիքիս այս կամ այն կտորը կստանա ինքնագովության շեշտեր...»:

Մարդու, բյուր մարդոց հետ մանկութ մինչև ծերույթ խոսած (ու խոսող) «Արարատը մեր նոր քերթության» անկապտելի իրավունքն ունեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ իբրն ամենայն հայոց բանաստեղծ կանգնելու, բայց թեկուզ աներկբայորեն մեծ անուն վայելող Կապուտիկյանը՝ ինքնահորջորջմամբ ամենայն հայոց բանաստեղծուհի ոչ երբեք (թող ներվի ինձ *de mo'rtibus ut be'ne, ut ni'hil*-ից այս պզտիկ շեղումը):

Սակայն անդին՝ եսակենտրոն շեշտ նշմարում ենք նաև Փափազյանի «Հետադարձ հայացք» հուշագրական երկհատորյակի էջերում, ուր մեծահոշակ հեղինակը բեմական արվեստի մասին ի՛ր խոկումներն է շարադրում և ուր անձամբ ի՛ր արվեստն է ընթերցողի առաջ ցուցահանում...

3. Չեմ ուզում մանրախնդրություն հանդես բերել և, ինչպես ասում են, մեղրի տակառի մեջ մի գդալ կուպր խառնել: Ուստի իմ «դիտողությունը» թող առաջարկության տեսք ունենա:

Քննարկվող ատենախոսությունը «Արևելահայ վավերագրության...» վերնագիրն ունի, բայց նրա տարբեր էջերում հեղինակն ըստ պատեհի նաև զուգահեռներ է անցկացրել արևմտահայ վավերագրության ստեղծագործությունների հետ ու այդ առումով բազմաթիվ մեջբերումներ կատարել:

Ամեն ինչից երևում է, որ Ա. Գալստյանը բավական լավ ծանոթացել է նաև արևմտահայերեն գեղարվեստական վավերագրության աղբյուրներին: Իմ առաջարկն է, որ նա ուսումնասիրությունները շարունակի և այս քնագավառն էլ նույն հաջողությամբ քննության ենթարկի, պարզի վերջինիս բովանդակային ու լեզվաոճական ուրույն գծերը: Այդպիսով նրա գրչի տակ այս ժառանգության արդեն «համահայկական» պատկերը կունենանք:

Առաջարկիս կարևորությունը ցույց տալու համար մի-երկու օրինակ միայն բերեմ: Դրանցից յուրաքանչյուրը վավերագրության ճյուղերին վերաբերող յուրահատուկ աղբյուր կլինի.

ա) Մեծանուն բանաստեղծի անուն վայելած Վահե-Վահյանը 1954-ին, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության աշխարհական պատվիրակ, առաջին անգամ հայրենի հողի վրա ոտք դրեց: Եկավ դեմ առ դեմ կանգնեց իր երազ երկրի իրողության առաջ, տեսավ ոսկեփայլ արևը,

պատմական պահի խորքին նայեց ու բնականաբար մի կողմ նետեց Խորհրդային Հայաստանի երկնքի թանձրամած ամպերը:

Հետո իր ուղեգրությունը վերնագրեց «Ցարալեզներուն Հաշտութիւնը»: Այն շարադրեց իր «Ոսկի Կամուրջ» բանաստեղծության շնչով ու ոգով.

*Նախատակո՞ծ եւ ուրացուած հոգին ցեղին մարտիրոսեալ
Հրաշալի՛ իր յարութեամբ կը փողփողի՛ այսօր դարձեալ...*

Այս տողերը, ամբողջ ուղեգրությունը (իրականում հեղինակի ուղեգրություններից մեկը, լավագույնը) բուն ոգևորություն եղան ի տես Երկրորդ աշխարհամարտի կործանիչ հարվածներից նոր միայն մեջքն ուղղած հայրենի ժողովրդի ոգորումների:

Առավել ևս. իր ուղեգրությանը այլ երանգ էլ տվեց, այնպես որ դա նաև պարողիա դարձավ Շահան Շահնուրի «Ցարալեզներուն Դաւաճանութիւնը» գործին՝ լեզվաոճական ու բառապաշարային ուրույն միջոցների գործածությամբ:

բ) Նախորդի նման՝ «մանկություն չունեցած» մի ուրիշ հեղինակ, տաղանդավոր գրող ու լրագրող Անդրանիկ Օտոուկյանը Հայաստան շատ էր եկել ու գնացել և իր տպավորությունները, ևս առավել՝ խոհերն ու դատողությունները «դրսի ու ներսի» ընթերցողներին էր ներկայացրել «Հին Երազներ, Նոր Ճամբաներ», «Նոր Հայաստան, Նոր Հայեր» գույգ ուղեգրություններով: Մրանք արդեն քաղաքական ուղղվածությամբ, հետևաբար և համապատասխան լեզվաոճական հնչումով գործեր են: Այստեղ Օտոուկյանը ոչ թե «Մոխրամանի» կամ «Վերջին Անմեղը»-ի հեղինակն է, այլ «Թուրթ Առ Երեսանի»: Եվ բոլորովին սպասելի է, որ ուղեգրողը, ի միջի այլոց, թեկուզ «քառսուն տակ կաշվի ներքո ծածկված», կսմիթներ արձակի խորհրդային իրողության հասցեին: Նա խորհրդային գաղափարախոսության և դրա վրա հիմնված կարգ ու կեցության հանդեպ «քեն ըրածի» պես էլ մնացել է: Նրա կսմիթները ճիշտ բռնում են Թեքեյանի հետևյալ տողերի հետ.

Ներե՛ որ քեն ըրի քեզի քիչ մը ատեն

- Մինչեւ երեկ - ու դեռ տաք չեմ բոլորովին..

(«Ներկայ Հայաստանին», Ա.)

Ի դեպ, երկու գործերը նրբին շեշտերով իրարից էլ են տարբերվում:

գ) Ուրի՛շ են հայ Սփյուռքի աշխարհը բոլոր միջօրեականներով ոտքի տակ առած Վահրամ Մավյանի «Անկապ Օրագիր» հուշագրությունը և «Հայու Բեկորներ» հատորը: Առանձնապես ուշարժան է վերջինիս գրական-գեղարվեստական ու վավերագրական գույգ կտրվածքով ինքնատիպությունը: Այստեղ կան թե՛ «չեզոք» պատում, նկարագրություն, թե՛ սրտաբաց երկխոսություն («Կռուեցէք Տղերք, Կռուեցէք Քաջ-քաջ...»), թե՛ անգամ հոետորական բացականչություն («Կեցցէ՛ Ընկեր Սիկոյեանը...»):

Ուշարժան է նաև այն, որ նրա տաղանդավոր գրչի տակ ընդելուզված են գեղարվեստական վավերագրությունը և ակնարկագրությունը, թե՛ ընդհակառակը: Ի՞նչ տարբերություն սակայն. չէ՞ որ գումարելիների տեղափոխությունից գումարը նույնն է մնում...

... Հուսկ վերջում արդեն պետք է որ երկու նախադասությամբ ընկայլալ կարգ ու կանոնին պալտ ու պատշաճը մատուցեմ.

ա) «Ատենախոսը միանժամայն արժանի է իր հայցած գիտական աստիճանին»:

Ի վերա այսր ամենայնի համեմայնվում եմ ատենախոսին այն բանում, որ քննարկվող երկագիրությունը կարող է մասնավոր ճյուղերի լեզվի ու ոճի ուսումնասիրության համար ուսանելի լինել:

բ) «Սեղմագիրը բովանդակում է ատենախոսության հիմնական թեզերը»:

Վերոշարադրյալը հաստատում և ստորագրում եմ՝

Պետրոս Բեդիրյան

(Բ. գ. դոկտոր, պրոֆեսոր)

2021, հունիսի 11

Բ. գ. դոկտոր, պրոֆեսոր Պետրոս Բեդիրյանի

ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտքարտուղին
(Մ. գ. թեկնածու, դոցենտ)



Մարիամ Իսախրյան